

ք. Գյումրի

«19» փետրվարի 2021 թ.

«Ընտանիք» ՊՈԱԿ-ը ի դեմս տնօրեն՝ Ա. Մինասյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Հակոբյան-Կարապետյան» ՍՊԸ, ի դեմս ԱՅ Կարապետյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

### ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

### 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

#### 2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում որաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) որաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) որաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և որաժարվել մնացած ապրանքներից.

բ) որաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 20 օրից ավելի.

2.1.8 Ձևնել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

#### 2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:



2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լինել՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

### **2.3 Վաճառողն իրավունք ունի՝**

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

### **2.4 Վաճառողը պարտավոր է՝**

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

## **3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ**

3.1 Պայմանագրի գինը կազմում է 561320 /հինգ հարյուր վաթսուամեկ հազար երեք հարյուր քսան/ ՀՀ դրամ: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով

<sup>17</sup> Եթե Վաճառողի կողմից գնային ստացարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հանվում են:



(հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

#### **4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ**

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

#### **5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ**

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության \_\_\_\_\_ 2 \_\_\_\_\_ օրինակ (հավելված N 3):

5.2 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Գնորդը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները:

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.3 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված \_\_\_\_\_ 2 \_\_\_\_\_ աշխատանքային օրվա ընթացքում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

5.4 Եթե պայմանագրի 5.3 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

#### **6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ**

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:<sup>20</sup> Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

#### **7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)**

<sup>20</sup> Եթե պայմանագիրը կերպով է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:

Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:



Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:<sup>21</sup>

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտական կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով,

1) Վաճառողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

8.7 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.8 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս

<sup>21</sup> Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:



են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.9 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.10 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.11 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.12 Պայմանագիրը կազմված է \_\_\_ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.13 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

**9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

**ԳՆՈՐԴ**

«Ընտանիք» ՄՊՍԿ ՊՈԱԿ  
ք. Գյումրի, «Անի» թաղ. 11փ 5/2  
ՀՎՀՀ 05504412

Հ/Հ 900018005554

Երևանի թիվ 1 ՏԳԲ

Ա. Մինասյան



(ստորագրություն)  
ԿՏ

**ՎԱՃԱՌՈՂ**

«Հակոբյան-Կարապետյան» ՍՊԸ  
ք. Գյումրի Ռուսթավելու 22  
ՀՎՀՀ 05537512  
Հ/Հ 163128019631

«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ Գյումրու մ/6  
Ս. Կարապետյան



(ստորագրություն)  
ԿՏ



Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ\*

«Ղ» դրամ

Անվանում	Միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը և ապրանքային նշանը	տեխնիկական բնութագիրը	մակրոմիջավայր	>>/<< միավոր քանակություն	մոտիվացիոն արժեք <</>>	միջակայքի արժեք	մատակարարման					
								հասցե	ենթակա քանակի ըստ եռամսյակների				
									2	3	4	7	10
<b>Լուսավորման սարքեր և էլեկտրական լամպեր</b>													
1	31500000	Էլեկտրական լամպ 15W LED E27	Էլեկտրական լամպ էկոնոմ 15W LED E 27 համարժեք հզորությունը՝ 110W, սնուցում 230, 50/60 Հց	հատ	1000	20000	20	Յ. Գյումրի Անի թ. 11փ 5/2	10				10
2	31500000	Էլեկտրական լամպ 18W LED E27 220-240V	Էլեկտրական լամպ շիկացման թեղիկով 220-240V լարման, 50 Հց հաճ. 18Wտ հզորությամբ, կոթառը՝ E27/27 տիպի:	հատ	900	9000	10	Յ. Գյումրի Անի թ. 11փ 5/2	10				
3	31500000	Էլեկտրական լամպ 11W LED E27 220-240V	Էլեկտրական լամպ էկոնոմ 11W LED E 27 համարժեք հզորությունը՝ 100W, սնուցում 230, 50/60 Հց:	հատ	720	8640	12	Յ. Գյումրի Անի թ. 11փ 5/2				12	
4	31500000	Էլեկտրական լամպ 23W LED E27 220v-50Hz պարուրածև	Էլեկտրական լամպ էկոնոմ 23W LED E 27 համարժեք հզորությունը՝ 100W, սնուցում 230, 50/60 Հց	հատ	1000	4000	4	Յ. Գյումրի Անի թ. 11փ 5/2				2	2
5	31500000	Էլեկտրական լամպ 48W E27 220-240V LED	Էլեկտրական լամպ էկոնոմ 23W LED E 27 համարժեք հզորությունը՝ 100W, սնուցում 230, 50/60 Հց	հատ	3200	19200	6	Յ. Գյումրի Անի թ. 11փ 5/2	1		3		2
6	31500000	Լամպ LED /10W 75W/	Լամպ LED Սպառող հզորությունը՝ 10Wտ Համարժեք հզորությունը՝ 75Wտ Կոթառը՝ GUS,3 Լույսի գույնը՝ 2700K	հատ	900	9000	10	Յ. Գյումրի Անի թ. 11փ 5/2	5			5	
		<b>Ընդամենը</b>				<b>69840</b>							
<b>Մ Ե կուսացման համար կիրառվող մասեր</b>													

7	31686000	եղանիկ/խրոցակ 16A	Էլեկտրական խրոց 16Ա, 250 Վ, ԳՕՍՆ Ռ 51322.1-99 և ԳՕՍՆ 7396.1-89,	հատ	350	700	2	Ք. Գյումրիի Անի թ. 11փ 5/2	2		
8	31651400	ժապավեն մեկուսիչ 0.19mmX19mmX10yds	Կաշուն թաղանթով մեկուսիչ ժապավեն 0.19mmX19mmX10yds:	հատ	160	960	6	Ք. Գյումրիի Անի թ. 11փ 5/2	3		3
9	31684400	Վարդակ բազմանցք /3տեղ/	Բազմանցք վարդակ 3տեղ և ԳՕՍՆ Ռ 51322.1-99 և ԳՕՍՆ 7396.1-89,	հատ	250	500	2	Ք. Գյումրիի Անի թ. 11փ 5/2			
10	31686000	խրոցակ 10Ա	Էլեկտրական խրոց 10Ա, 250 Վ, ԳՕՍՆ Ռ 51322.1-99 և ԳՕՍՆ 7396.1-89,	հատ	200	400	2	Ք. Գյումրիի Անի թ. 11փ 5/2	2		
11	31685000	Լար երկարացման /5մ/ 3տեղ	Երկարացման լար՝ 6 վարդակով, լարի երկարությունը 5մետր: Յուրաքանչյուր վարդակը ոչ պակաս 10Ա, 250 Վ միացման մանրակներով, ԳՕՍՆ Ռ 51324.1-99 կամ համարժեք:	հատ	2250	2250	1	Ք. Գյումրիի Անի թ. 11փ 5/2	1		
12	31651600	ժապավեն ձգվածքի	Պակի 19մմX15մմX0.20մմ չափերով: Տեֆլոնային ժապավեն նախատեսված խողովակների պարույրների խտացման համար	փաթ	320	640	2	Ք. Գյումրիի Անի թ. 11փ 5/2			2
		<b>Ընդամենը</b>				<b>5450</b>					
<b>Շինարարական նյութեր և հարակից արտադրանք</b>											
13	44171300	եզրաժապավեն 50մ	Փաթույթը 50մ, լայնությունը 2սմ, ջերմաստիճանից եզրաշերտ, փայտի իմիտացիայով, տարբեր երանգների:	փաթ	2500	5000	2	Ք. Գյումրիի Անի թ. 11փ 5/2			2
14	44191700	Պտտտակի քողարկիչ /50հատ/	Կլոր, ինքնակաշուն շերտ՝ տարբեր երանգների փայտի իմիտացիայով: Թերթի վրա 50 հատ Փ-14մմ	թերթ	80	800	10	Ք. Գյումրիի Անի թ. 11փ 5/2			10
15	44163170	ճկախողովակ 1/2դյույմ 60սմ	80x60 դրվակ ջրի 1/2դյույմ	հատ	1000	2000	2	Ք. Գյումրիի Անի թ. 11փ 5/2			2



			60սմ										
16	44192620	Մեխ 20մմ	Մեխ 20մմ: Պողպատի մակնիշը համապատասխան СТ3КП, ГОСТ 4028-63, ТУ 28.7- 136-007-2003: Մաքրված արտադրության ընթացքում մակերևույթին գոյացած յուղերից և մանր անհարթություններից	կգ	800	400	0,5	Ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2					0,5
17	44192620	Մեխ 30մմ	Մեխ 30մմ: Պողպատի մակնիշը համապատասխան СТ3КП, ГОСТ 4028-63, ТУ 28.7- 136-007-2003: Մաքրված արտադրության ընթացքում մակերևույթին գոյացած յուղերից և մանր անհարթություններից	կգ	700	350	0,5	Ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2					0,5
18	44192620	Մեխ 40մմ	Մեխ 40մմ: Պողպատի մակնիշը համապատասխան СТ3КП, ГОСТ 4028-63, ТУ 28.7- 136-007-2003: Մաքրված արտադրության ընթացքում մակերևույթին գոյացած յուղերից և մանր անհարթություններից	կգ	700	350	0,5	Ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2					0,5
19	44112730	Դիսկ ալմազային Ф 175	Նախատեսված է՝ Կերամոգրանիտի մրամոր, կաֆելային սալիկների և կերամիկական սալիկների կտրատման համար:	հատ	4500	4500	1	Ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2				1	
		<b>Ընդամենը</b>				<b>13400</b>							
<b>Պոլիէթիլենային տոպրակներ, պարկ</b>													
20	19642200	Օդաբարձիկ շմմ	Պոլիէթիլենե թաղանթ շմմ հաստությամբ, օդաբարձիկ ներով	գծմ	800	16000	20	Ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2	10				10



21	19642200	Թաղանթ պոլիէթիլենային	Պոլիէթիլեն երկուակ, թափանցիկ լայն 1.5 սմ	զօմ	240	4800	20	Յ. Գյումրի Անի թ. 11 փ 5/2		10	10	
		<b>Ընդամենը</b>				<b>20800</b>						
<b>Գործիքներ, փականներ, բանալիներ, կախիչներ, ամրացնող դետալներ, շղթաներ և զսպանակներ</b>												
22	44511320	Նրբաղոց փայտի 130մմ	Նախատեսված է շերտավոր ֆաներայի, փայտի բարակ շերտերի, ձեռքով ձևավոր սղոցման համար 130մմ	հատ	40	6000	150	Յ. Գյումրի Անի թ. 11 փ 5/2	40	40	60	10
23	44511260	Հղկաթուղթ կլոր N 80	Հղկաթուղթ կլոր՝ Փ-115 N= 80 PS 19 EK 80 Պատրաստված է թղթի հիմքի վրա. նախատեսված է փայտանյութերի ոլորտում օգտագործման համար:	հատ	60	480	8	Յ. Գյումրի Անի թ. 11 փ 5/2	2	2	2	2
24	44511260	Հղկաթուղթ կլոր N100	Հղկաթուղթ կլոր՝ Փ-115 N= 100 PS 19 EK 100 Պատրաստված է թղթի հիմքի վրա. նախատեսված է փայտանյութերի ոլորտում օգտ. համար:	հատ	60	480	8	Յ. Գյումրի Անի թ. 11 փ 5/2	2	2	2	2
25	44511260	Հղկաթուղթ կլոր N120	Հղկաթուղթ կլոր՝ Փ-115 N= 120 PS 19 EK 120 Պատրաստված է թղթի հիմքի վրա. նախատեսված է փայտանյութերի ոլորտում օգտ. համար:	հատ	60	480	8	Յ. Գյումրի Անի թ. 11 փ 5/2	2	2	2	2
26	44511260	Հղկաթուղթ կլոր N150	Հղկաթուղթ կլոր՝ Փ-115 N= 150 Արդյունավետ է հատկապես ներկերի, լաքերի, ձեփանյութերի և փայտանյութերի վերամշակման համար	հատ	60	480	8	Յ. Գյումրի Անի թ. 11 փ 5/2	2	2	2	2
27	44511260	Հղկաթուղթ կլոր N180	Հղկաթուղթ կլոր՝ Փ-115 N= 180 Արդյունավետ է հատկապես ներկերի, լաքերի, ձեփանյութերի և փայտանյութերի վերամշակման համար	հատ	60	480	8	Յ. Գյումրի Անի թ. 11 փ 5/2	2	2	2	2

28	44511260	Հղկաթուղթ կլոր N240	Հղկաթուղթ կլոր՝ Փ-115 № 240 Արդյունավետ է հատկապես ներկերի, լաքերի, ծեփանյութերի և փայտանյութերի վերամշակման համար	հատ	60	480	8	թ. Գյումրի Անի թ. 11փ 5/2	2		2	2	2
29	44511260	Հղկաթուղթ կլոր N60	Հղկաթուղթ կլոր՝ Փ-115 № 60 PS 19 EK 60 Պատրաստված է թղթի հիմքի վրա. Նախատեսված է փայտանյութերի ոլորտում օգտագործման համար:	հատ	60	480	8	թ. Գյումրի Անի թ. 11փ 5/2	2		2	2	2
30	44511260	Հղկաթուղթ N 80	Հղկաթուղթ № 80 LS318 Պատրաստված է բամբակի հիմքի վրա: Արդյունավետ է հատկապես ներկերի, լաքերի, ծեփանյութերի և փայտանյութերի վերամշակման համար	գծ.մ	800	800	1	թ. Գյումրի Անի թ. 11փ 5/2	0,5			0,3	0,2
31	44511260	Հղկաթուղթ N100	Հղկաթուղթ № 100 LS312 Պատրաստված է բամբակի հիմքի վրա: Արդյունավետ է հատկապես ներկերի, լաքերի, ծեփանյութերի և փայտանյութերի վերամշակման համար	գծ.մ	800	800	1	թ. Գյումրի Անի թ. 11փ 5/2	0,5			0,3	0,2
32	44511260	Հղկաթուղթ N120	Հղկաթուղթ № 120 LS312 Պատրաստված է բամբակի հիմքի վրա: Արդյունավետ է հատկապես ներկերի, լաքերի, ծեփանյութերի և փայտանյութերի վերամշակման համար	× Է Կ Ը	800	800	1	թ. Գյումրի Անի թ. 11փ 5/2	0,5			0,3	0,2
33	44511260	Հղկաթուղթ N150	Հղկաթուղթ № 150 LS312 Պատրաստված է բամբակի հիմքի վրա: Արդյունավետ է հատկապես ներկերի, լաքերի, ծեփանյութերի և փայտանյութերի	գծ.մ	800	800	1	թ. Գյումրի Անի թ. 11փ 5/2	0,5			0,3	0,2



			վերամշակման համար															
34	44511260	Հղկաթուղթ N180	Հղկաթուղթ № 180 LS312 Պատրաստված է բամբակի հիմքի վրա: Արդյունավետ է հատկապես ներկերի, լաքերի, ծեփանյութերի և փայտանյութերի վերամշակման համար	գծ.մ	800	800	1	Ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2	0,5					0,3	0,2			
35	44511260	Հղկաթուղթ N500	Հղկաթուղթ № 500 LS312 Պատրաստված է բամբակի հիմքի վրա: Արդյունավետ է հատկապես ներկերի, լաքերի, ծեփանյութերի և փայտանյութերի վերամշակման համար	հատ	170	850	5	Ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2	1					2	2			
36	44511260	Հղկաթուղթ N60	Հղկաթուղթ № 60 LS318 Պատրաստված է բամբակի հիմքի վրա: Արդյունավետ է հատկապես ներկերի, լաքերի, ծեփանյութերի և փայտանյութերի վերամշակման համար	գծմ	800	800	1	Ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2	0,5					0,2				
37	44511210	Սղոցիկ T101AO BOSCH	Էլեկտրական նրբասղոցի սղոցիկներ /փայտի/ T101AO	հատ	450	1800	4	Ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2	1			1	1	1	1			
38	44511210	Սղոցիկ T101B BOSCH	Էլեկտրական նրբասղոցի սղոցիկներ /փայտի/ T101B	հատ	460	1840	4	Ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2	1			1	1	1	1			
39	44511210	Սղոցիկ T144D BOSCH	Էլեկտրական նրբասղոցի սղոցիկներ /փայտի/T144D	հատ	300	1200	4	Ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2	1			1	1	1	1			
40	44511210	Սղոց ժապավենային HBS.261	ժապավենային սղոցներ (կտրումը անվերջ ճկուն պողպատե ատամնավոր	հատ	8000	8000	1	Ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2				1						

			սղոցաթերթով)											
41	44511210	Սղոց ժապավենա- յին HBS 261	ժապավենային սղոցներ (կտրումը անվերջ ճկուն պողպատե ատամնավոր սղոցաթերթով)	հատ	5000	5000	1	Ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2	1					
42	44531100	Պտուտակ 5մմx40մմ	Պտուտակ 5մմx40մմ	հատ	6	300	50	Ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2	50					
43	44531100	Պտուտակ 3.5*1.8	Պտուտակ 3.5*1.8	հատ	2	100	50	Ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2	50					
44	44531100	Պտուտակ 3.5*30	Պտուտակ 3.5*30	հատ	3	150	50	Ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2	50					
45	44531100	Պտուտակ 3.5*40	Պտուտակ 3.5*40	հատ	4	200	50	Ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2	50					
46	44531100	Պտուտակ 3.5*45	Պտուտակ 3.5*45	հատ	4	200	50	Ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2	50					
47	44531100	Պտուտակ 3.5*50	Պտուտակ 3.5*50	հատ	4	200	50	Ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2	50					
48	44531100	Պտուտակ 4*40	Պտուտակ 4*40	հատ	4	200	50	Ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2	50					
49	44531100	Պտուտակ 4*50	Պտուտակ 4*50	հատ	5	250	50	Ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2	50					
50	44521121	Դրան փականի- միջուկ	Դրան փականի- միջուկ 8-10մմ, 3- 5 հատ բանալիով	8 ""	2200	2200	1	Ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2						1
51	44521120	Դրան փական	Բարձրությունը 154մմ, մինչև ատանցքը լայնությունը 25- 35մմ	հատ	4000	8000	2	Ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2						2
52	44531180	Մանեկ- հեղյուս /5x25մմ/	Մանեկ-հեղյուս /5x25մմ/ ցինկապատ, պողպատի մակնիշ CT10/20, CT10κո/20κո, ԳՕՍՍ 7805-70	զույգ	11	220	20	Ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2						20
53	44531180	Մանեկ- հեղյուս /6x40մմ/	Մանեկ-հեղյուս /6x40մմ/ ոչ ցինկապատ, պողպատի մակնիշ CT10/20, CT10κո/20κո, ԳՕՍՍ 7805-70	զույգ	12	240	20	Ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2						20
54	44511140	Քլունգ	Երկարությունը: 90 սմ/փայտե պոչ/ Քաշը: 2.88 կգ	հատ	2200	2200	1	Ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2					1	



55	44511170	Տերև հավաքող հարմարանք	Փոցխանման հովհարաձև այգեգործական գործիք, լայնքը 52 սմ, կոսթը մետաղից, փայտե պոչ L - 1,20մ	հատ	1600	1600	1	Ձ. Գյումրի Անի թ. 11փ 5/2		1			
56	44511340	Գայլիկոն ավազային Փ 6	Գայլիկոնը պատրաստված է բարձր որակի պողպատից P6M5-ից : Չափ/տրամագիծ՝ 6 մմ, Գայլիկոնի հումք՝ պողպատ:	հատ	1000	1000	1	Ձ. Գյումրի Անի թ. 11փ 5/2	1				
57	44511100	Մածկիչ 3-4սմ լայն. /մետաղ/	Պողպատյա թիթեղ՝ բռնակով: օգտագործվում է նյութերը խտնելու, տարածելու և վերցնելու համար, այդ թվում՝ մթերք, գիպս և ներկեր:	հատ	600	600	1	Ձ. Գյումրի Անի թ. 11փ 5/2		1			
58	44511100	Կոանշտեյն/Կալունակ	Հորիզոնական մետաղական հենարան, որ ամրացվում է ուղղահայաց մակերևույթին, րարձակ	հատ	150	2250	15	Ձ. Գյումրի Անի թ. 11փ 5/2	10			5	
		<b>Ընդամենը</b>				<b>52760</b>							
<b>Փայտ</b>													
59	03410000	Փայտանյութ լորենի	Լորենի /լայն. 20-40սմ, հաստ. 3-7սմ/ չոր, <25%	խմ	170000	68000	0,4	Ձ. Գյումրի Անի թ. 11փ 5/2	0,1		0,1	0,1	0,1
60	03410000	Փայտանյութ հաճարենի	հաճարենի /լայն.30 - 40սմ, հաստ. 3-7սմ/ չոր՝ խոնավությունը <25%	խմ	220000	66000	0,3	Ձ. Գյումրի Անի թ. 11փ 5/2	0,1		0,1	0,1	
		<b>Ընդամենը</b>				<b>134000</b>							
<b>Նավթային վազելին, մոմ և հատուկ բեռզին</b>													
61	09221600	Ուայթ սպիրիտ 0.5լ	Լուծիչ յուղային հիմքով 0.5լ:	հատ	600	1200	2	Ձ. Գյումրի Անի թ. 11փ 5/2			1		1
62	09210000	Մեքենայի յուղ 40մլ	Բարձր ինդեքսայան միներալ յուղերի և հատուկ S- և P պարունակող հավելանյութերի հիման վրա ստեղծված յուղեր: 40 մլ	հատ	170	1700	10	Ձ. Գյումրի Անի թ. 11փ 5/2	5			3	2
		<b>Ընդամենը</b>				<b>2900</b>							
<b>Սոսինձներ</b>													
63	24911200	Էմուլսիա	Սոսինձ ՊՎԱ պոլիվինիլացետատային:	հատ	1200	7200	6	Ձ. Գյումրի Անի թ. 11փ 5/2	2		1	2	1

64	24911300	Սոսինձ ՄԴՖ 125մլ հեղուկ 400ml	ՓԹՍ սայերի սոսինձ /սոսնձման արագացուցիչ 125մլ.հեղ/ 400մլ արագացուցիչ	հատ	1910	19100	10	Ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2	4	2	4
